

01/10.1/16963-14 2014-10-13

AJV-42-29 2014-10-09

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարուքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-595-11.09.2014-ՊԻ-010/0 և Պ-595՝-11.09.2014-ՊԻ-010/0) վերաբերյալ:

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածով սահմանվում են այն հիմքերը, երբ դատարանը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոքը վերադարձնում է: Այս

առումով գտնում ենք, որ, որպես բողոքը վերադարձնելու հիմք, անհրաժեշտ է նախատեսել նաև այն դեպքերը, երբ, մինչև դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելը, բողոք ներկայացրած անձից դիմում է ստացվել այն վերադարձնելու մասին, և դատական ակտը վերանայելու համար հիմք դարձած նոր հանգամանքը հաստատող ապացույց չի ներկայացվել:

Համաձայն օրենքի նախագծով նախատեսված օրենսգրքի 426.8-րդ հոդվածի 5-րդ մասի՝ **սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կամ 3-րդ կետերով** նախատեսված հիմքերով բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված սխալները վերացնելու և բողոքը վերադարձնելու մասին որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում կրկին ներկայացվելու դեպքում բողոքը համարվում է դատարանում ընդունված: Մինչդեռ անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ դատական ակտի վերանայման բողոքը վերադարձնելու հիմքերն այս երկու կետերով չեն սահմանափակվում: Ուստի, գտնում ենք, որ, եթե դատական ակտի վերանայման բողոքը կրկին անգամ կարող է ներկայացվել դատարան՝ միայն վերադարձման նշված հիմքերի առկայության դեպքում, ապա անհրաժեշտ է միմյանցից տարանջատել և առանձին նախատեսել դատական ակտի վերանայման բողոքի **վերադարձման և մերժման հիմքերը:**

Համաձայն օրենքների նախագծերին կից ներկայացված հիմնավորման՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքերում փոփոխություններ կատարելու հիմքը Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումների (ՄԴՌ-984, ՄԴՌ-1049, ՄԴՌ-1099) պահանջներն են, որոնցով ամրագրվել է, որ նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումն անխուսափելիորեն պետք է փաստի ուժով (ipso facto) հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի կամ կոնվենցիոն իրավունքի

խախտում թույլ տված դատական ակտի բեկանմանը՝ բացառելով այն օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը:

Օրենքների նախագծերով առաջարկվում է սահմանել դատարանի՝ դատական ակտի վերանայման վարույթի փուլում, հատկապես նոր կամ նոր երևան եկած հանգամանքի բացակայության դեպքում, վերանայման պահանջը մերժելու, իսկ դրանց առկայությունը հաստատվելու դեպքում՝ դատական ակտը պարտադիր բեկանելու և փոփոխելու կամ ստորադաս դատական ատյան ուղարկելու լիազորությունները:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանելու հարցը որոշելու վերաբերյալ թիվ **ՄԴՈ-1049** որոշման 6-րդ կետով սահմանում է.

«Հիմք ընդունելով նոր հանգամանքների և նոր երևան եկած հանգամանքների հիմքերով դատական ակտերի վերանայման ինստիտուտների սկզբունքային որոշ ընդհանրությունները՝ որպես օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերանայելու բացառիկ միջոցներ, և գնահատելով այդ ինստիտուտները՝ որպես մարդու խախտված իրավունքները Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին համապատասխան արդար և արդյունավետ դատաքննությամբ վերականգնելու կարևոր երաշխիք, սահմանադրական դատարանը գտնում է, որ 2011 թվականի **ՄԴՈ-984** որոշմամբ, ինչպես նաև այդ հիմնախնդրի վերաբերյալ սահմանադրական դատարանի մի շարք այլ որոշումներով (ՄԴՈ-701, ՄԴՈ-709, ՄԴՈ-751, ՄԴՈ-758, ՄԴՈ-765, ՄԴՈ-767, ՄԴՈ-833, ՄԴՈ-872 և այլն) արտահայտված իրավական դիրքորոշումներն այնքանով, որքանով առնչվում են նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման՝ սույն գործով քննության առարկա գործող իրավակարգավորումներին, կիրառելի են նաև սույն գործով:»:

Բացի դրանից, օրինական ուժի մեջ մտած դատական ակտի նոր և նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերանայման վարույթի, դրա իրավական հետևանքների առումով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը, ըստ էության, ընդունելի է համարել միատեսակ կարգավորումների առկայությունը:

Ելնելով շարադրվածից՝ գտնում ենք, որ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 4-րդ հոդվածներն անհրաժեշտ է խմբագրել՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության դիրքորոշումը, որն ամրագրվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Արփինե Հովհաննիսյանի օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-563-09.07.2014-ՊԻ-010/0) վերաբերյալ 2014 թվականի օգոստոսի 7-ի N 01/10.1/12880-14 գրությամբ ներկայացված եզրակացության մեջ: Առաջարկում ենք օրենքների նախագծերի վերաբերյալ միասնական մոտեցում ամրագրելու նպատակով առաջնորդվել Հայաստանի Հանրապետության կառավարության նշված եզրակացության մեջ արտացոլված մոտեցումներով և սկզբունքներով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը լրամշակման կարիք ունի և ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ

հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արսեն Մկրտչյանը:

Օրենքների նախագծերի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունները:

Հարգանքով՝

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման դեպքում

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում
փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական
դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ**

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>> և <<Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>> և <<Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ օրենքներ) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) նախատեսվում են մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ հստակեցվում է նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը, ինչպես նաև նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով գործի նոր քննության կարգը:

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի Նախագծերի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման հետ կապված հարաբերությունների կարգավորմանը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն **չի նախատեսվում**:

Եզրակացություն

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր)՝ կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը կազմվել է՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27¹ և 28-րդ հոդվածների պահանջները: Նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» N 18-Ն որոշման և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի «Սոցիալական պաշտպանության ոլորտի առանձին ենթաօլորտների բնութագրիչները հաստատելու մասին» N 34-Ա/1 հրամանի համաձայն:

Նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **դրական ազդեցություն**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

Նախագծերով առաջարկվում է՝

1. ՀՀ օրենսդրությամբ ամրագրել ՀՀ Սահմանադրական դատարանի 2011 թվականի հուլիսի 15-ի ՍԴՈ-984, 2012 թվականի սեպտեմբերի 28-ի ՍԴՈ-1049 և 2013 թվականի մայիսի 31-ի ՍԴՈ-1099 որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները,

2. հստակեցնել նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով պայմանավորված դատական ակտերի վերանայման կարգը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ օրենքների նախագծերի ընդունումը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

Պ-595-11.09.2014-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 01-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 395-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենսգրքի 426⁸ -րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 426⁸ . Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը

1. Դատարանը դատական ակտը նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով վերանայում է վերանայման վարույթ հարուցելու որոշման հիման վրա:

2. Դատարանը նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոքը վերադարձնում է, եթե՝

1) չեն պահպանվել սույն օրենսգրքի 426⁷ -րդ հոդվածով սահմանված՝ բողոքի ձեւին եւ բովանդակությանը առաջադրվող պահանջները, կամ

2) գործն ընդդատյա չէ տվյալ դատարանին, կամ

3) բողոքը ներկայացվել է դրա համար սույն օրենսգրքով նախատեսված ժամկետը լրանալուց հետո, եւ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն չի ներկայացվել, կամ

4) բողոքը ներկայացվել է դրա համար սույն օրենսգրքով նախատեսված ժամկետը լրանալուց հետո, եւ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը մերժվել է, կամ

5) բողոքը ներկայացրել է այն անձը, ով բողոք ներկայացնելու իրավունք չունի:

3. Դատարանը նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոքը վերադարձնելու մասին որոշումը կայացնում է բողոքն ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում: Որոշումը պատշաճ ձեւով ուղարկվում է բողոք բերող անձին: Որոշման մեջ նշվում են բողոքում թույլ տրված բոլոր առերեսույթ սխալները:

4. Դատարանը նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոքը վերադարձնելու հիմքերի բացակայության դեպքում բողոքն ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում կայացնում է դատական ակտի վերանայման վարույթ հարուցելու մասին որոշում: Որոշումը պատշաճ ձեւով ուղարկվում է բողոք բերող անձին եւ գործին մասնակցող այլ անձանց:

5. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կամ 3-րդ կետերով նախատեսված հիմքերով բողոքը վերադարձնելուց հետո բողոքում թույլ տրված սխալները վերացվելու եւ բողոքը վերադարձնելու մասին որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում կրկին ներկայացվելու դեպքում բողոքը համարվում է դատարանում ընդունված: Բողոքը կրկին ներկայացվելու դեպքում դրանում առկա սխալները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում:

6. Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոքը վերադարձնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ որոշումն ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

7. Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոքի քննության ժամանակի եւ վայրի մասին պատշաճ ձեւով ծանուցվում են բողոք բերող անձը եւ գործին մասնակցող այլ անձինք: Նրանց չներկայանալն արգելք չէ գործի քննության համար:

8. Բողոքի քննության արդյունքում դատարանը մերժում է վերանայման պահանջը, եթե քննության արդյունքում պարզվում է, որ բողոքում մատնանշված հանգամանքը տվյալ գործով նոր կամ նոր երեւան եկած հանգամանք չի հանդիսանում:

9. Դատարանը բեկանում է դատական ակտը եւ ուղարկում նոր քննության ստորադաս դատարան, եթե բողոքի քննության արդյունքում պարզում է, որ բողոքում մատնանշված հանգամանքը տվյալ գործով նոր կամ նոր երեւան եկած հանգամանք է հանդիսանում: Այս դեպքում դատարանը սահմանում է նոր քննության ծավալը:

10. Դատարանը բեկանում եւ փոփոխում է դատական ակտը, եթե բողոքի քննության արդյունքում պարզում է, որ բողոքում մատնանշված հանգամանքը տվյալ գործով նոր կամ նոր երեւան եկած հանգամանք է հանդիսանում, եւ գործով հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս, առանց նոր քննության, կայացնելու նոր դատական ակտ:»:

Հոդված 3. Օրենսգրքի 426⁹ -րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 426⁹ . Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով գործի նոր քննության կարգը

1. Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով գործի նոր քննությունն իրականացվում է սույն օրենսգրքով սահմանված կարգով:

2. Գործի նոր քննության արդյունքում դատարանը կարող է չփոփոխել վերանայվող դատական ակտի եզրափակիչ մասը, միայն եթե ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ սույն օրենսգրքով նախատեսված նոր կամ նոր երեւան եկած հանգամանքներն ըստ էության չեն ազդել գործի ելքի վրա:

3. Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքների հիմքով գործի նոր քննության արդյունքում կայացված դատական ակտերը ենթակա են բողոքարկման սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-595¹-11.09.2014-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 05-ի վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 187-րդ հոդվածի՝

1) վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Վերանայման վարույթ հարուցելը»,

2) 1-ին մասում «կայացնում է դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում» բառերը փոխարինել «կայացնում է վերանայման վարույթ հարուցելու մասին որոշում» բառերով,

3) 2-րդ մասում «Դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն» բառերը փոխարինել «Վերանայման վարույթ հարուցելու մասին որոշումն» բառերով,

4) 3-րդ մասում «Դիմումը վարույթ ընդունելու որոշումն» բառերը փոխարինել «Վերանայման վարույթ հարուցելու մասին որոշումն» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «մինչեւ դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելը» բառերը փոխարինել «մինչեւ վերանայման վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելը» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 189-րդ հոդվածի 1-ին մասում «դիմումը վարույթ ընդունելու մասին դատարանի որոշումն ստանալուց հետո» բառերը փոխարինել «վերանայման վարույթ հարուցելու մասին որոշումն ստանալուց հետո» բառերով:

Հոդված 4. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 1901-րդ հոդվածով.

«Հոդված 1901. Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման վարույթը

1. Նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման դիմումի քննության ժամանակի եւ վայրի մասին պատշաճ ձեւով ծանուցվում են դիմում ներկայացրած անձն ու գործին մասնակցող այլ անձինք: Նրանց չներկայանալն արգելք չէ գործի քննության համար:

2. Դիմումի քննության արդյունքում դատարանը մերժում է վերանայման պահանջը, եթե քննության արդյունքում պարզվում է, որ դիմումում մատնանշված հանգամանքը տվյալ գործով նոր կամ նոր երեւան եկած հանգամանք չի հանդիսանում:

3. Դատարանը բեկանում է դատական ակտը եւ ուղարկում նոր քննության ստորադաս դատարան, եթե դիմումի քննության արդյունքում պարզում է, որ դիմումում մատնանշված հանգամանքը տվյալ գործով նոր կամ նոր երեւան եկած հանգամանք է հանդիսանում: Այս դեպքում դատարանը սահմանում է նոր քննության ծավալը:

4. Դատարանը բեկանում է փոփոխում է դատական ակտը, եթե դիմումի քննության արդյունքում պարզում է, որ բողոքում մատնանշված հանգամանքը տվյալ գործով նոր կամ նոր երեւան եկած հանգամանք է հանդիսանում, եւ գործով հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս, առանց նոր քննության, կայացնելու նոր դատական ակտ:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» եւ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի ընդունման

Նախագծերի փաթեթով առաջարկվող փոփոխությունները պայմանավորված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2011 թվականի հուլիսի 15-ի ՍԴՈ-984, 2012 թվականի սեպտեմբերի 28-ի ՍԴՈ-1049 եւ 2013 թվականի մայիսի 31-ի ՍԴՈ-1099 որոշումների պահանջների կատարման, դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումներն օրենքում իրացնելու անհրաժեշտությամբ:

Իրավակիրառական պրակտիկայում Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 426⁹ -րդ հոդվածի 1-ին մասի ուժով նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով դատարանը գործի քննության արդյունքում իրականացնում էր այն նույն լիազորությունները, որոնք իրականացնում էր ստորադաս դատարանի դատական ակտերի

օրինականությունն ստուգելիս, ինչն իր հերթին նշանակում էր, որ դատական ակտը վերանայող դատարանն իրավասու էր մերժել բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այսինքն՝ իրավակիրառական պրակտիկայում քրեական դատավարության օրենսգրքի 426⁹ -րդ հոդվածի 1-ին մասին տրված մեկնաբանության ուժով դատարանները հնարավորություն էին ստանում օրինական ուժի մեջ թողնել վերանայման ենթակա այն դատական ակտը, որը կայացվել էր Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող ճանաչված օրինադրույթի կիրառմամբ կամ ընդունվել էր ի խախտումն Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի: Դրա համար իրավական հիմք էին ծառայում քրեական դատավարության օրենսգրքի 426⁹ -րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, որոնցում ամրագրված «ընդհանուր կարգ» ձեւակերպումը, ըստ իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանության, թույլ էր տալիս դատական ակտը վերանայելիս ղեկավարվել համապատասխանաբար քրեական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածով, եւ ըստ այդմ, օրինական ուժի մեջ թողնել վերանայման ենթակա դատական ակտը:

Վերը նշված գործերով կայացված որոշմամբ Սահմանադրական դատարանը, բացահայտելով քրեական դատավարության օրենսգրքի 426⁹ -րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրաիրավական բովանդակությունը, հաստատել է այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ այն դեպքում, երբ դատական ակտի վերանայման համար որպես նոր հանգամանք հիմք է հանդիսանում սահմանադրական դատարանի՝ համապատասխան օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու մասին որոշումը, ապա գործնականում վերանայված դատական ակտի ուժի մեջ մնալն անհնարին է, որովհետեւ արդարադատության հիմքում դրվել է եւ կշարունակի ուժի մեջ մնալ հակասահմանադրական նորմը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների հիման վրա դատական ակտերի վերանայման դեպքում եւս Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների խախտման դեպք արձանագրելիս դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելը չի ապահովի անձանց խախտված իրավունքների վերականգնումը: Ուստի, նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումն անխուսափելիորեն պետք է ipso facto հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած կամ կոնվենցիոն իրավունքի խախտում թույլ տված դատական ակտի բեկանմանը:

Սահմանադրական դատարանն այսպիսի դիրքորոշում է արտահայտել նաեւ նոր երեւան եկած հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման կապակցությամբ (ՍԴՈ-1049):

Սակայն խնդիրը պայմանավորված չէր միայն իրավակիրառական պրակտիկայով, այլ նոր երեւան եկած եւ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտի արդյունավետ գործողության համար անհրաժեշտ եւ բավարար օրենսդրական դաշտի բացակայությամբ:

Չնայած տարիների ընթացքում կատարված բազմաթիվ փոփոխություններին, այդուհանդերձ նոր եւ նոր երեւան եկած հանգամանքների հիման վրա դատական ակտերի վերանայման ինստիտուտը դեռեւս ունի բարեփոխումների կարիք: Այս առումով հատկապես անհրաժեշտություն կա սահմանելու դատարանի լիազորությունները դատական ակտի վերանայման վարույթի փուլում, հատկապես նոր կամ նոր երեւան եկած հանգամանքի բացակայության դեպքում վերանայման պահանջը մերժելու, իսկ դրանց առկայությունը հաստատվելու դեպքում՝ դատական ակտը պարտադիր բեկանելու եւ փոփոխելու կամ ստորադաս դատական ատյան ուղարկելու լիազորությունները:

Նախագծով լուծվել են նաեւ նոր երեւան եկած եւ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտին առնչվող օրենսգրքում առկա այլ խնդիրներ:

Այսպիսով, նախագծի ընդունումը նպատակ է հետապնդում երաշխավորելու դատական ակտի վերանայման գործառույթի արդյունավետ իրականացման հնարավորությունը՝ ապահովելով դատական ակտերի վերանայման նպատակի եւ խնդիրների իրացում եւ միաժամանակ անձի՝ արդարադատության մատչելիության եւ արդար դատաքննության իրավունքի արդյունավետ իրականացում: